


751/916

---

Գ. Գ. Պ Բ Ա Կ Ե

# ԱՐԱԳՈՎՈՐԸ



ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ

891.99
Դ - 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՑՐԿՎԱՆ

1 940

ՕՊ

ԿԿ298

22 JUN 2007 11:56 AM  
19 NOV 2011 10:49 AM  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

891.99

7-27

Գ. ԳԱՐԵՎԱՆ


891.99 20771-59

9-27 | Գարեվան

Հայաստանի Հանրապետության  
ազգային բանկի հաշվում  
պահպանային գումար

Ըստ բառ 10 000 000

ԱՐԴԱՌԸ  
ՀԱՅ ԲԱՆԱՏԵՂՆԻԹՅԱՆ ՄԵջ



2501

.8P

1268



100 ԽԱ-9005

82-15505

ՏԵՐԵՎԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՏԵՂՆԻԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

27643

29 MAR 2013 TOOS MUL S.S.

ՅԵՐԿՈՒՅԻ ԽՈՍՔ

«Արագածը հայ բանաստեղծության մեջ» վերնագրով այս աշխատությունը դրելու գործը յս ձեռնարկել եմ սրբանից մի քանի տարի առաջ, հատկապես մասսայական՝ տարբիստական-ալզինիստական խմբերի համար, փորոնք վերելքներ են կատարում դեպի Արագածի կատարները: Մեր հիմնական նպատակն է յեղել առւընչության ալզինիստ ընթերցողներին ծանոթացնել հայ գրողների այն բանաստեղծություններին, փորոնք նվիրված են Արագածին: Աւտի այդ բանաստեղծությունները տրվում են վոչ կարծ մեջքերումների ձեռվ, այլ լրիվ, համարելով, վոր այլ ոգտակար և հետաքրքրի կենսի Արագածի վրա ճամփորդություն կատարող ամեն մի եքսկուրսանատի համար: Ավելորդ շնոք համարել Արագածի նկարագրության հետ միասեղ տալնակ գրու անհրաժեշտ անդիկուլյուններ Արագածի պատմության և աշխարհագրության մասին: Հետագայում մենք հրատարակելու յենք առանձին զգերով յերկու աշխատություն ևս՝ «Արագածը հայ ժողովրդի պատմության մեջ» և «Արագածի աշխարհագրությունը»: Անշուշտ տարբեց-տարի գեղակի Արագածը յեղած հետաքրքրության աճման հետ զուգընթաց մեծանում և նաև Արագածին վերաբերող անհրաժեշտ գրականության պահանջը: Մեր թի այս և թե հետազարդությունը գեթ մասամբ լրացնելու յեն այդ բնադրավառում յեղած բացը:

ՅԵՐԵՎԱՆ, 1940 թ.



Խմբագիր՝ Ս. Ղազարյան  
Տէիս. խմբագիր՝ Հ. Կարապետյան  
Առաջ. սրբագրիչ՝ Մ. Պարոնիկ  
Հանձնված ե աշտադրության 194  
Ստորագրված ե տպագրիթւ 1940  
Վ. Ճ Ճ 33, Երևան, Խ 69, պատվիր Խ

20771-59

## ԱՐԱԳԱԾԸ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

«...Յերանի՛ թէ մեկ որ մեր բնագիտ յեղրայրակից-ներից մեկը ուրախացներ մեզ մի՛ուսումնական շրջանկան քննությամբ Արագածի վորապիտության, թէ վուլկանականության, թէ յերկրաբանության և թէ համբարամության վերաբերությամբ: Իսկ թէ չձանձրանա, բացի տացանից գործ գնել և շերմաշափ և ծանրաչափ և մազմիւյան պատ և մանրացոյց, յերեւ ուշադիր լինի Արագածի բույսերին, տունկերին և նրա վրա ապրող կենդանիներին, այն ժամանակ մեզ կմնա ՎՈԶ ՄԻԱՅՆ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԼԻՆԵԼ ՆՈՐԱՆԻՑ (այսինքն՝ Արագածից Վ. Դ). ԱՅԻ ՅԵՎ, ՊԱՐՄԵՆԱՆ, ՆՈՐԱՆՈՎ, ՅԵՎՐՈՊԱՑԻ ԱՌԱՋ»: \*)

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ «Յերկեր», էջ 181

Հայնածավալ Արարատյան գաշտում գեմհանդիման կանգնած են յերկու հնագույն լեռներ, վորոնք դարեր շարունակ առատ աղբյուր են հանդիսացել մարդկային յերեվակալյության համար: Դարեր շարունակ բազմաթիվ կիսավայրենի յեղեր և հին աշխարհի քաղաքակրթված աղբեր են անցել նրանց փեղերով, նրանց մասին հորինելով բազմաթիվ առասպելներ, յերգեր ու վիպասանություններ:

Արարատը — վիշտապազուների հայրենիքը — անհրապույր, քարքարոտ, գեվերով լի, իսկ Արագած՝ ընդհակառակը, ջրառատ, սառնորակ աղբյուրներով, կանաչի և ծաղիկների բուրմունքով, հստակ լեռնային ողով:

Հին սար և Արարատը, դրա համար ել ասում ենք «Ալհակ Արարատ», ձյունածածկ, սպիտակափառ:

Վերքան հոյակապ լեզենդներ կան կապված այդ սարի հետ...

Ալհակ Արարատն առաջին անգամ իր լանջերին հյուրընկաւել և ուրարտական տիրակալներին իրենց հորդաներով:

Խալդական հզոր պետությունն ստեղծողը, հին արևելքի խոշոր տիրակալը, վանի թագավորության հիմնադիրը՝ Արգիշտին, վորի անվան հետ են կապում խալդագետները նաև Արագած սարի

\*) Ընդգծութերն իմ են.

անվան ծագումը, մեր թվագրությունից 7—8 դար առաջ Արարատի վրայով և անցնում գեպի հյուախ, իր աշխարհակալական ծրագրերն իրագործելու համար:

Արարատյան բարգավաճ գաշտում գեպի յերկինք խոյացող սրածայր Արարատի գագաթները հայ ժողովրդի պատմության լուս վկաներն են յեղել յերկու հազարից ավելի տարիների ընթացքում: Արարատի հետ և կապված յեղել համաշխարհային ջրհեղեղի և նոյի տապանի առասպելները:

Ահա թե ինչու յերկար տարիներ այդ սարը համարվել և սրբազնա սար, և վերելքը գեպի նրա գագաթները՝ անհնարին:

Յեկ այդ և պատճառը, վոր Արարատը գեպի իրեն և գրավել բազմաթիվ խոշոր գիտնականների, ինչպիս նաև հայ ժողովրդի պատմիչներին սկսած հնագույն ժամանակներից:

Սակայն Արարատը հայ ժողովրդի յերգերի և առասպելների մեջ հայտնի յե վորպես «Ազատն Մասիս»: Ո՞վ կարող ե տիւրել Արարատյան ազատ յերկիրը, քանի կա «Ազատն Մասիսը», վորտեղ ազգում են հզոր քաջքերը, վորոնք պաշտպանում են իրենց բնակավայրը մարդկային ներխուժումից և խորն անդունդաներն են քաշում, տանում: յուրաքանչյուրին, ով կհամարձակվի վորք կոխել նրա նվիրական սահմանները:

Այսպես և պատկերել Մասիսը հայ ժողովրդի պատմագիր Մովսես Խորենացին: Ահա այս «մութ աշխարհում», «քաջքերի», «վոզիների» մութ քարանձավներում և շղթայված Արտավազը վորի շղթաները ամրացնում են դարբինները և թույլ չեն տալիս, վոր նա դուրս դա, աշխարհը կործանի:

«Յեթե դու վորսի յելնես գեպի ազատ Մասիսը, քեզ կրոնեն քաջքերը, կտանեն ազատ Մասիսի վրա, այստեղ կմնաս և լույս չես տեսնի» (Մովսես Խորենացի):

Կամ՝ ինչպես բանաստեղծ Հ. Հովաննիսյանն է զրում.

«Զարկեցնք, դարրիններ, կոանը սալին,

Զարկեցնք կոանը—շղթայվն ամրանան,

Անիծյալ արքայի կապանքն ամրանան,

Զարկեցնք, դարրիններ, կոանը սալին:

Ահարկու ամպերն յեկան ժողվեցան,

Ծեր Մասյաց ճակտին և քող փաթթեցին.

Գոռում և փոթորիկ գագանի նման,

Հառաջում, սուրում և կատաղած քամին:

(Հով. Հովհաննիսյան, «Բանաստեղծություններ», էջ 67):

Ահա այսպես, հայ ժողովուրդը վոչ մի լավ խոսք չունի Արաւատի մասին, վոչ մի յերգ ու զովասանք, այլ ընդհակառակը՝ անեծք և նզովք ունի:

Այլ և Արագածը: Արագածի մասին հայ ժողովուրդը և նրա ստորոտին ապրող բոլոր ժողովուրդները—աղբականցիները, քըրդերը—միայն մի բան են ասում՝ «Զան Արագած»:

Ֆազ գյալանդան

Չիչակլյարը աչըլըր,

Բու գալլարըն

Սարդարի սան, Ալագյաղ:

(Գարնան գալով

Ծաղիկները բացվում են,

Այս սարերի

Սարդարն են դու, Ալագյաղ):

Արագածի հոյակապ ջուրաշխական սիստեմը, վոր կյանք և տալիս ջրագուրեկ ընդարձակ տարածությունների, հմայտնի յե նրա ստորոտին ապրող ժողովուրդներին հնագույն ժամանակներից, սառնորակ աղբյուրները, վորոնք գետնի տակով հսկայական տարածություններ հոսում են զեպի շրջակա զյուղերը, այս բուլը հանդիսացել են այն հոգու ուժը, վորի շնորհիվ սիրել և աշխատավոր ժողովուրդն այդ սարը և սրտաբուխ յերգեր և հյուս սել նրա մասին.

Արագածը բարձր տեղ է,

Զուրը հիվանդի դեղ է:

Արագածը Արարատի նման «Քաջըն» և «ղեկը» չունի. Արագածի վրա կան լեռնային մեղմիկ ավաշող զեփյուռ, քաղցրահնչուն մանիներ, սեր և զուրգուրանք, լեռնային զետակների կարկաչ և ծաղիկների անուշ բուրմունք: Ահա թե ինչն հայ խոշորագույն լիրիկ, տաղմանդավոր բանաստեղծ Ավետիք իսահակյանը իր բանաստեղծական մեծ ներշնչումներն ստանում ե Արագածից: Պոետն իր սրտի քնքույշ լարերով, վեհ հուզումով յերգում է Արագածը: Ամենայն իրավամբ կարելի յե ասել վոր հայ խոշորագույն բանաստեղծն իր լավագույն յերգերի ներշնչումներն ու մտահղացումներն ստանում ե Արագածից՝ հատուկ տեղ տալով Արագածի մասիներին.

Արագածը՝ աստղերի մեջ՝

Ավամանդե թագը զլիին,

Սարերեն վեր, ամպերեն վեր,

Թիկն և տվել զմբուխտ—զահին:

Մինամ—հավքի թեր ունիմ, Թոնիմ կ'երթամ՝ Արագած, Ճակտիս աստղե պսակ ունիմ, Արտիս միջին—զառ յերագ: Կամ՝

Արի գիրկն, մարմար Զարոս, Թոչենք, յերթանք Արագած:

Արագածը մեր յերկրի բոլոր սարերի մեջ ամենից լայնանիսն ե, ամենից հարուստն իր առաջ բուսականությամբ և ծաղիկներով: Արագածի վրա հաշվում են մոտ 10 հազար զանազան տեսակի ծաղիկներ:\*)

Մինչև հյուսիսային ամենաբարձր գագաթը (4096 մետր ծամակ), քարածերպերին, հովիտների մեջ և բլուրների կտտաբեներին, ձյունաշերտերի արանքներին, ամեն տեղ և ամեն քայլափոխում հանդիպում ենք բազմաթիվ անուշանոտ ծաղիկների: Պատկերավոր ասած՝ կանաչ գարգերի սար և Արտագածը: Մինչդեռ Կովկասյան լեռնաշղթայի ամենացածր գագաթներն անգամ, գեռած հազար մետր բարձրությունից, ծածկված են հավիտենական ձյունաշերտերով և սաղցարաշտերով, ինչպես որինակ՝ Ելբրուս սարի հարավային լանջին Ազառ սաղցարաշտը, Դոնզուզ—Որունի, Կազբեկի լանջերը և այլն, այստեղ, Արագածի վրա, ընդհակառակն ե—ամառվա ամիսներին ամենաբարձր գագաթներին ծաղկներ են ծաղկում, և զագաթների տակ գիշերելք մեծ հաճույք և պատճառում տուրիստներին: Քառագագաթ Արագածի ամենաբարձր լանջին, մինչև 3600 մետր բարձրության վրա, ամառվա բուլոր ամիսներին կոլտնտեսային հոտն և արածում և մեր յերշանիկ յերկրի կոլտնտեսական հովվի լիաթոք յերգն և հնչում:

Դուն Արագած, ալմաստ վահան,

Կայծակեղեն թրերի,

Գագաթներդ՝ բյուրեղ վահան

Թափառական ամպերի:

\*) ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի բրիգադը, ակադեմիկ Աբեղյելի գլխավորությամբ, 1932 թ., հատուկ ուսումնասիրության յենթարկեց Արագածը գեղողիկան և բուսաբանական տեսակետից: Ուսումնասիրության արդյունքները զետեղված են յերկու ստվար հատորներում (ուսումնական լազով), վորտեղ մանրամասն նկարագրված են նաև Արագածի ծաղիկները:

Մեզ ժայռերդ՝ արծվի բուն,  
Լճակներդ՝ լույս—փիրուպ.  
Առուներդ՝ մեջքիդ փայլուն,  
Պերճ գոտիներ վոսկենյուս:

Աղբյուրներդ գիշեր ու զոր  
Խոսքի բռնված իրար հետ,  
Վտակներդ՝ զիւ ու գլոր,  
Արեշումե փեշերեդ:

Թիթեռներդ՝ հուր հրեղեն,  
Թոչող—ծաղկող ծաղիկներ,  
Զառ ու զարմանք յերադներեն,  
Պոկված ծվեն—ծվիկներ:

Ծիրանավառ դռւն թագուհի,  
Բուրմունքների դռւն աղբյուր,  
Ծաղիկներդ հազար գույնի,  
Հազար անուն, հազար բույր:

(Ավ. Խոահակյան)

Արագածն ունի մի քանի հովիտներ. Արևմտյան կողմում  
ե, Նիդ գավառում (այժմ Ասպարան) Գեղհովիտը (Դավիչայի  
հովիտը), վորտեղից հոսում ե «Կարկաչանոս ու ծիծաղագնաց»\*)  
Գեղհովիտ գետակը. Քաղցր ջրերի հովիտը, Լճակ-  
ների հովիտը, Սև ջրի հովիտը, խոկ նրա հակառակ կող-  
մում ընկած ե Մանթաշի հովիտը, վորտեղով հոսում ե Կարկա-  
չուն կոչված փոքրիկ արագավազ գետակը, վորը թափվում ե Յիու-  
րյան գետի մեջ. Մանթաշի հովիտը Արագածի ամենազեղեցիկ  
հովիտներից ե, վորտեղ բուսնում են վայրի շուշանը, լեռնային  
կակաչը և բազմաթիվ այլ ծաղիկներ:

Մանթաշին նվիրած իր բանաստեղծության մեջ մեր մե-  
ծանուն բանաստեղծը գովում ե այդ «յերազահովիտը», նրա  
զմբուխտե որորոցը և լուսափթիթ, մետաքս-ծածկոց ծաղիկները,  
նրա բյուրեղ զանգերին նմանող աղբյուրները, հուրհավքերը  
արծաթ թևերօվ, վորտեղ վոսկե հերիաթներ են պատմում դյու-  
թական աշխարհներին և բանաստեղծին «նանի» են ասում:

\*) Աղեղան, և Աղբյուրաբառ:

Եյ, Մանթաշի յերազահովիտ;  
Դուն, զմբուխտե որորոց,  
Ծաղիկներդ լուսափթիթ  
Վերաս մետաքս—վառ ծածկոց:

Աղբյուրներդ՝ բյուրեղ զանգեր,  
Հովիերդ անուրջ կըերեն,  
Մոռացումի թովիչ յերգեր,  
Հովիերդ անուշ կհրորեն:

Հուրհավքերդ՝ թևերն արծաթ,  
Կտուցները՝ լալ-մարջան,  
Ինձ կապատմեն վոսկի հեքիաթ,  
Աշխարհներեն դյութական:

Ալմաստ առուն, մոր պես անքուն,  
Նանիկ կասե, որ, որ, որ,  
Անուշ նանին զառ մանկության,  
Նանի, նանի, որ, որ, որ:

Բնությունը լեզու յե ստանում խահակյանի մոս, Արագա-  
ծը նրա համար դառնում ե իր իղձերի, հույզերի և հույսերի  
թարգմանը: Նա հանգստություն ե դտնում Մանթաշի փեշերին,  
Մանթաշի թաշուններին ե զիմում իրեն հետ խոսելու, իր սիր-  
ութը սիրուհու նման յերկինք տանելու:

Հեյ: Արագած, ալ-լալ հագել,  
Ու՞ր կը թոնիս իմ յերգիս պես,  
Սրտիս խորքեն յելել—կանգնել  
Յերկինք կերթաս իմ սիրուս պես:

Քու լալազար ծիծունք  
Իմ վարդ սերեն բույր կառնեն,  
Զառ Մանթաշի թև ու թռչունք  
Իմ բլուլեն ձեն կառնեն,  
Հեյ ջան, հա ջան,—ցողն ու ակունք  
Սրտիս խորքեն ծին կառնեն:

Այնունեակ Արագածի պերճ գորգերն ու ծաղկունքը այսպես  
ե յերգում Ար. Խահակյանը:

Արագածը իրար վրա  
իր պերճ զորդերն եւ փոնել  
Պերճ զորդերով քար ու քռայ  
Քյոշքերի պես զառազութել:

Դառ վարդերի տոնն եւ այսոր  
Հարս ու աղջիկ զարդաբուհ  
Պտույտ կուտան որոր-որոր  
Վարդակիթիթ լանջերում:

Ու աղախի կը թոցնեն՝  
Չյուների պես սպիտակ,  
Իրար վրա ջուր կցանեն,  
Աղբյուրներն անապակ:

Պնետի նուրբ հոգու համար այնքան դյուժիչ ու հմայիչ ե  
իր հայրենի յերկրի ամեն մի գեղեցիկ անկյուն և, հատկապես,  
իր սիրած Արագածը, վոր ցանկություն եւ հայտնում մեռնելուց  
հետո թաղվել Արագածի լանջերում, ծաղիկների բուրմունքի մեջ:

Յես վոր մեռնեմ, ինձի թաղեք  
Ալագյաղի լանջերում,  
Վոր Մանթաշից հովերը զան,  
Վրաս հեղան ու յերթան:

Զմռան ամիսներին Արագածը դառնում եւ անմատչելի. նըա  
գագաթները և լայնանիստ լանջերը, մինչև շրջակա դաշտավայշ-  
րերը, ծածկվում են սպիտակ սավանով. սառչում են գետերը,  
փոքրիկ լեռնային խաղաղ ու անդորր լճակները, փակվում են  
ճամբաները, և հաղորդակցությունը բնակելի վայրերի մեջ դառ-  
նում եւ անհնարին: Ահա թե ինչն բանաստեղծ Հովհաննես Հով-  
հաննիսյանն իր մի բանաստեղծությամբ արտահայտում եւ իր  
յարից հեռու ապրող սիրահարի փափազը, հույսը, թե յերբ պետք  
եւ բացվեն Արագածի «սարի ճամբեք»-ը, վոր նա գնա, հասնի իր  
յարին:

Ալագյաղ բարձր սարին,  
Զին ա կիտվել կատարին,  
Սարի ճամբեք, բաց ելնք,  
Եթամ, հասնեմ իմ յարին:

(Հ, Հովհ. «Յերկերի ժողովածու», I հատ., էջ 158):

Այդպես եւ յերգում և մտածում Արագածի մասին նաև ժո-  
ղովուրդը:

\* \*

Ամեն տարի, թե բքաշունչ ձմռանը, թե ամառվա արևակեզ  
ամիսներին, հարյուրավոր յերիտասարդ տուրիստներ և ալպի-  
նիստներ վերելքներ են կատարում զեպի Արագածի կատարները:

Արագածը, սկսած իր ստորոտից մինչև չորս գագաթները,  
դարձել եւ մեր ժողովրդի համար մի հաճելի զրոսավայր: Հազա-  
րավոր կոլտնտեսականներ իրենց հոտերով ամբողջ ամառն անց  
են կացնում Արագածի վրա:

Այժմ, յերբ մենք թերթում ենք անցյալ դարի նշանավոր  
ճանապարհորդների՝ Արիխի, Վագների, Պատուխովի և մյուսնե-  
րի նկարագրությունները, մեզ զարմանալի եւ թվում, թե ինչ-  
պիսի խորհրդավորությամբ են նկարագրում այդ գիտնական-ճա-  
նապարհորդներն իրենց կատարած վերելքները դեպի Արագածի  
գագաթը:

Ռուս հայտնի տոպոգրաֆ Պաստուխովը, վորն Արագած ե  
բարձրացել 1848 թվին, պատմում ե, վոր իրենց առաջնորդում  
ելին զինված կողակներ, և վոր նրանք փրկվեցին քյուրդ ավա-  
զակների հարձակումից միմիայն շնորհիվ իրենց ուղեկցող այդ  
կողակների:

Այժմ առուրիստական խմբերը գիշերում են Արագածի պա-  
տահական բոլոր ծերպերում՝ բացօթյա, թավշյա կանաչի վրա,  
գլուխ աղբյուրների և արագանոս գետերի մոտ:

Կոլտնտեսային հոտը պահապանների կարիք չունի, այն  
պահպանվում ե միմիայն պատահական զայերից, կամ նրանց  
խմբերից: Աղբբեջանցի, քուրդ և հայ յայլավորները աղբում են  
իրար կողքի, ողտագործում Արագածի բարիքները հավասարա-  
պես, յերգում ու սիրում Արագածը, ինչպես ընդհանուր և հարա-  
զատ մոր, վոր հավասարապես սնունդ և տախի բոլորին:

Ահա թե ինչն Արագածը ժողովրդական գովերդության,  
հիացմունքի և սիրո առարկա յեւ գարեն գարերից ի վեր բոլորի  
համար:

Այսպիս եւ յերգում Արագածը աշուղ Թոմասովին, վորն  
Արագածը նույնիսկ ամբողջ աշխարհի հետ փոխել չի ցանկանում.

Յեղբայր, կուտես լավ իմանաս,  
Մեր գուբեռնին երեվան ա,  
Երեվան կոչվում ա Կավկազ,  
Մեր սարին կասեն Ալագյաղ:

Մայիս, հունիս այնտեղ ման դաս,  
Դրախտային ծաղիկն ա խաս,  
Ծաղիկ—ծաղկունք անպակաս,  
Հարուստների կյանքն Ալագյազ:

Ուտեմ Ալագյազ մածուն,  
Կաթի սերը խամառ մաքուն,  
Շատ անուշ ա շվաքի քուն,  
Ելյաթներու տուն Ալագյազ:

Ալագյազ ծաղիկ շատ ա,  
Պաղ աղբբներ մեջն առատ ա,  
Ամառ լավ ա, ձմեռ վատ ա,  
Դրախտային դու Ալագյազ:

Թումասողի Գեվորգի բան,  
Դարձյալ ախ կանեմ Ասպարան,  
Ամբողջ աշխարհ յեթե ինձ տան,  
Քեզ չեմ փոխի, ջան Ալագյազ:

(«Հայ աշուղներ», եջ 365):

Շիրակի յերգիչ՝ աշուղ Շիրակը այսպես ե յերգում ձկներով հարուստ գետերը, վող սարերի մեջ պատվական, բոլոր ազգերի համար սիրելի, ամպերին հավասար, հոտավես բուրաստան Աբագածը.

Անմահական հողիդ ու ջրիդ մեռնեմ,  
Ծաղկունքով զարդարված, կայտառ Ալագյազ,  
Լանջերիդ ման գալով կարոսս առնեմ,  
Հոտավետ բուրաստան, պայծառ Ալագյազ:

Շուրջդ լի խոխոջուն աղբյուր ու ակներ,  
Չորեր, թափեր, առուներ ու վակներ,  
Ֆետերումդ լիքն են պատվական ձկներ,  
Դար ու փոսդ ծառ ու անտառ, Ալագյազ:

Բարձրացել ես ճիշտ ամպերին հավասար,  
Համբուրում ես նոցա իբրև սիրահար,  
Չուրդ անմահական, քարերդ ջուհար,  
Նաղիր ունես գու անմահական, Ալագյազ:

Շիրակն եմ, զովեստս ճիշտ ու իսկական,  
Վող սարերի մեջը զու յես պատվական,  
Ամենայն ժողովուրդ քեզնից բավական,  
Դու ես անվանի ու մեծ սար, Ալագյազ:

(«Հայ աշուղներ», եջ 313):

Մեր աշուղներից շատ շատերը մեծ վոգեղությամբ այժմ յերգում են Արագածը, նրա ստորոտին ապրող ժողովրդի փառքն ու պարձանքը, առատության և լիության սիմվոլը, համեմատելով այն մեր յերկրի հզորության հետ, վորպես նոր կյանքի, փառքի հասանելի զագաթի: Արագածի լանջին և ապրում աշուղ Աշխուժը, վորը մանկությունից ճաշակել և Արագածի բարիքները, իր պատկերի հետ յայլա յե զնացել Արագածի կրծքին, ծծել և նրա անպական ողը և խմել ստոնորակ ջրերը: Այժմ ծերացած աշուղ Աշխուժը այսպես ե յերգում:

Սիրուն գալրնան գեղ թագուհի անման, \*  
Պատահների կյանքի զարդ են, Ալագյազ,  
Կարկաչահոս աղբյուրներդ մայրական  
Իրծքե բղիսած անուշ կաթ են, Ալագյազ:

Զով հովերի, ողի, ջրի հենարան,  
Ամառային անուշ քնո ոլորան,  
Քետակների, առուների յերգարան,  
Վառ աստղերն ել քեզ կսիրեն, Ալագյազ:

Նեկտարաբուխ ծաղիկներդ հոգեշունչ,  
Զառ փեշերդ ծաղիկներ են վոսկեփունջ,  
Կույսերի յերգ, հովիդի սրինդ քաղցրահունչ,  
Իրար խառնված՝ քեզ կզովեն, Ալագյազ:

Ճերմակ ամպեր քո շղարշն են հարսնային,  
Շողն ու շաղը սուրբ քրտինքդ են գրախտային,  
Ցողով արբած վարդերիդ բույր բնածին,  
Սառած սրտին հուր կըշնչեն, Ալագյազ:

\*) Այս վոտանապը տպագրվում է առաջին անգամ. գրի շեմ առել յես՝ հեղինակի բերանից, 1939 թ. եքսպերիցիայի ժամանակ, Ղաղնաֆար գյուղում:

Քս յերկնահուազ վեհ կատարով ասազազարդ՝  
Մաքառել ես շանմերի դեմ միշտ հպարտ,  
Զրվեժներիդ կոհակները հորդառատ,  
Դաշտավայրիդ կյանքն ու շունչն են, Ալտդյազ:

Աշխույժ յերգիս սուրբ որորան հայրենի,  
Նոր արեկց քեղ աչքալույս արժանի,  
Վաղորդյան զով հովերի հետ գեղանի  
Քեզ նոր շողեր կը գուրգուրեն, Ալադյազ:

\*\*\*

Արագածն ել ունի նույնքան հին պատմություն, վիրքած  
Արարատը, Արագածի վրայով են անցեր, նրան տիրելու նորա-  
տակով, հին արևելքի բաղմաթիվ տիրակալներ:

Մովսես Խորենացին շատ գեղեցիկ բառերով են կարստում  
Արագածը, անվանելով նրա լանջերից հոսող ջրերը «ղետահաս  
աղջիկներին շրջանցող յերիտասարդներ», նկատի ունենալով, վոր  
ոարը շրջապատող լեռների ստորոտների մոտ խփում են բազ-  
մաթիվ հստակ աղբյուրներ, վորոնց ջրերը միանալով՝ կազմում  
են հանդարտ գետեր ու շրջապատում լեռների ստորոտներն ու  
դաշտերի շրջակայքը: Համաձայն Մովսես Խորենացու «Պատմու-  
թյան» առասպելի, Հայկ նահապետի ցեղից նրա վորդի Արմե-  
նակը բնակություն են հաստատում Արագածի վրա, վորի անու-  
նով և սարը կոչվում են Արագած—այդ մեր թվագրությունից  
2026 տարի առաջ եր: Արմենակը իր ընտանիքի անդամների,  
վորդիների մեջ են բաժանում Արագածը, և բարգավաճում են այն-  
տեղ մի հրաշալի կուլտուրա: Խնչպես յենթաղրում են, Արագածն  
այն ժամանակ անտառապատ սար ե յեղել և մինչև Արմենակ  
նահապետի այնտեղ բնակվելը՝ այս սարի մոտ, ինչպես և մեր  
յերկրի զանազան տեղերում, յեղել ե բնակչություն: «Մեր նախնի  
Հայկի գալուց առաջ մեր յերկրի շատ տեղերում ցիր ու ցան  
ապրել են վոչ մեծ թվով մարդիկ» (Մ. Խորենացի, I գիրք,  
զլուխ Ժբ.): Սննդուշտ, Խորենացու այս առասպելն ուրարտական  
ծագում ունի Հայտնի յե, վոր մեր թվականությունից 7—8 դար  
առաջ ուրարտական հզոր պետությունը արշավանք ե կատարում  
գեղի հյուսիս. իսկ այդ արշավողները ապրում եյին մեր յերկ-  
րի հարավում, Վանա լճի մոտերքում:

Ուրարտական հզոր տիրակալ Արգիշտին, անցնելով Արարա-

տի վենշերով, գալիս հասնում ե Արքակածի ստորոտները, պատ-  
վում ե իրեն ե յենթարկում այստեղ ապրող բոլոր կիսավայ-  
քենի ցեղերին, ամրացնում ե այժմյան Ամրերդ ամրոցը, վորն  
անշուշտ ուրարտական ծագում ունի Արգիշտին այնուհետեւ անց-  
նելով Քասախ գետի հովտով՝ գրավում ե Արքակածի արեւլյան  
լանջերը: Ամրացնելով այդ լանջերը Ղազնաֆար գյուղի մոտ,  
նրա վերին մասում, Գեղհովիտի աջ և ձախ բարձրունքների գու-  
գակորությունների մեջ կառուցում ե ամրոցներ, ինչպես որինակը  
Լուսաբերդ, Ամասնի ամրոցները և այլն, վորոնց ննացորդները  
մինչև մեր որերը դեռ ննում են:

Ուրարտական տիրատկալն այնուհետեւ Քասախի կիրճով և  
Ապարանի ուսով զնում ե մինչև այժմյան Ղանլինջա գյուղը և  
այնուեղ կառուցում ե Մարմաշենի՝ (այժմ՝ Ղանլիջայի) ամրոցը:  
Վորտեղ մինչև որս ել պահանջնում ե Արգիշտիի սեպագիր ար-  
ձանագրությունն իր նվաճումների մասին:

Ահա միանդամայն իրավացի պետք ե համարել զիտնական-  
ների այն յենթարկությունները, վոր Արագածն առաջին անգամ  
յուրջ ուշադրության ե արժանացել ուրարտական հայտնի նվա-  
ճնող Արգիշտիի կողմից, ուստի Մովսես Խորենացու նշած այդ  
Արմենակն ել, վորպես առասպելաբանության մեջ հիշող մի  
անձ, վոչ այլ վոք ե, յեթե վոչ նույն ուրարտական Արգիշտին:

Արագածի գովերգումը հրաշալի պատկերներով և վոգեգո-  
րությամբ տվել ե նաև հինգերորդ գարի մի ուրիշ պատմէի՝ Ղազար  
Փարպեցին: Այդ, ամենայն իրավամբ կարելի յե ասել, մի ար-  
ձակ բանաստեղծություն ե, զրված հայոց Արշակ թագավորի հայ  
յերկրից հեռանալու առթիվ, յերբ Հայաստանը կոթցրեց իր ան-  
կախությունը և բաժանվեց պարսիկների և հունաց աշխարհակալ  
պետությունների միջև: Պարսիկներին անցան՝ «զրախտի նման»:  
Արշակունյաց ազգի սեփական, բնիկ կալվածները՝ Վաղարշապատա-  
քաղաքը, Արշակունյաց թագավորների մայրաքաղաքը...»: Այդ  
առթիվ Ղազար Փարպեցին նկարագրում ե շրջակա լեռները և  
այդ նկարագրությունն անշուշտ այստեղ վերաբերում ե Արտօ-  
նունիթ և Արագածին:

«... Երանց (այդ լեռների) բարձր գագաթներից հօսում  
են առատ Ջեր, զաշակը ջրելով՝ լիասատությամբ անուական  
մատակարարում են բազմութիւն ույը և ին բազմությամբ լցված

թանգավորական քաղաքին հայ և պինի, անուշահմատ, քաղցրահմամբ  
բանջարներ և զանազան յուղալի սերմեր: Իսկ գեղի լանջակողմերն  
ու սարահարթ տեղերը՝ յեթե մի նոր տեսնող մարդ իրեն աչքերը  
դարձնի, հանդելձներ կկարծի, և վոչ թե ծաղիկների գույները  
նարածված համով ու հոտով: Երանց թանձր ու առատ խոտերն  
արոտական, ընտանի անթիվ եշերի ու վայրենի, կատաղի կեն-  
դանիների խմբերին կշտացնելով՝ նրանց մորթիներն են թանձ-  
րացնում, գավակները գերացնում և պարարտնեթյամբ ամբողջ  
մարմինը հաստացնում: Իսկ անշուշտ ծաղիկների առատ հոտը  
նետավոր, վորսասեր քաջ մարդկանց և ցերեկ գիշեր անդում  
ապրող հովիթներին առողջություն և պարզեցնում, խելքի զայու-  
թյուն և զօրացնում ու նորոգում: Այսուել գտնվում են խելա-  
ցի ու հմուտ բժիշկների ստուգագույն խոսքին համաձայն դեղերի  
ոգտակարության համար՝ զանազան տեսակ բույսերի արմատ-  
ներ, և հիվանդություններն արագ բժշկող սպեղանիք, վորոնք  
յերկար ժամանակ ցավերի մեջ տանջվողներին տալիս են առող-  
ջություն: Իսկ դաշտերի՝ ամեն տեսակ բարիքներով չափազանց  
առատությունը գրավում, քաշում և աշխատասեր մարդկանց,  
ինչպես իշխանական հրամանով, և այս կամ այն բարիքով լիաց-  
նելով նրանց՝ միանգամայն հրապուրում ավելի ևս շուտով գե-  
պի իրանց դառնալ:

Այսպիսի հրաշագեղ բարիքներով լիքն են ու առատ Արա-  
գածի հարավային լանջերը—պատմական Արագածոտնը, վորի  
մասին այսպիսի վառ գույներով և վոգեսրությամբ պատմում և  
Դագար Փարակեցին:

Այսուհետեւ հայ պատմագիր Ա. Լիշանը, նկարագրելով Այ-  
րորատյան գեղեցիկ յերկիրը, այսպես և պատկերացնում Արա-  
գածը.

«Իբր ի կիսոյ մայիս ամսոյ ցվերջ կոյս սեպտեմբերի՝ յոյժ  
գեղեցիկ և զմայլական երեսյթս ընծայէ լեառնի՝ օժանդակու-  
թեամբ ջուրց և օգոց յատակությամբ, քաղցրահոս բուրմամբք, և  
երտնդ երանդ ծաղկօք, յորս գեղինն և յաճախագոյն, այլ և կա-  
պուտագոյն Շուշանք վայրիք կամ Հիրիկք, շառափայլ Կակաչք՝  
Բոզք կամ Հոռոմ—երնջանք, Կաթնեղնիճք կամ Զանցա-  
գակծաղիկք, Զագախոս սասնորակ,.. և այլք պեսապես յո-  
րոց՝ զմայլմամբ քաղեր բնասէրն Վակներ գերմանացի, յամի  
1843... և այլն:

(Ալիշան՝ «Արարատ», Էջ 131):

Կամ մի այլ անդ Ալիշանը գրում է:

«Զուրք և զետք զաւառին (Արագածոտն գավառ՝ վ. Դ.) զրիա-  
թէ բովանդակ ի մեծէ լեռնէ (Արագածի մասին ե—վ. Դ.) ասսի  
իջանին և կնան ընդ ամենայն կողմանս, արբուցանելով զան-  
դաստանո և զայդին»:

(Ալիշան՝ «Ալյուրիմատ», Էջ 132):

\* \* \*

Արագածի պատմությունը հայ ժողովրդի պատմության մեջ  
փառավոր եղ և կազմում: Մեր այս նյութից դուրս լինելով այդ  
հարցը, նրա լուսարանումը թողնում ենք մի այլ ժամանակի: Այսուել անհրաժեշտ ենք համարում հիշատակելու վոր Արագածը  
շրջապատված եր Հայաստանի յերեք պատմական գավառներով՝  
մի կողմում Արագածոտն եր, մյուս կողմում՝ Շիրակը, իսկ  
յերրորդ կողմում՝ Նիդ (այժմյան Ապարան) գավառը: Այդ գա-  
վառները, ինչպես արգեն մի անգամ նշել ենք, դեռ հին ժամա-  
նակներից ունեցել են իմաստ ազգաբնակություն, վորոնց զիտա-  
վոր զրադակունքն և յեղել հողագործությունը և անասնապահու-  
թյունը: Արագածն իր առատ ջրերով հողագործ զյուղացու ապ-  
րուստի առատագույն ազբյուրն և հանդիսացելու վոռովման բազ-  
մաթիվ տեսակներով: Արագածից հոսող առատ ջրերի շնորհիվ նրա  
փեշերին զարդացել և ծաղկել այգեգործությունը, բանջարա-  
րուծությունը: Շիրակը հայունի յեղել իր հացահատիկային  
մշակություններով, այդ առատության մասին ժողովուրդն ասել  
է՝ «թէ քո Շարայի որկորն ե, մեր Շիրակայ ամբարքն չեն»:  
(Յեթե քո վորկորը Շարայինն է, մեր ամբարները Շիրակինը  
չեն): Ինչպես պատմում ե մեկ Մովսես Խորենացին, այդ շատա-  
կեր Շարան Հայկ Նահապետի թոռն և յեղել Արմենակի հաջորդը՝  
Արտամյանը, «Բ ազմածին ու շատակեր Շարային տնով-  
տեղով ուղարկեց Արագած լեսան հյուսիսային  
կողմերը, Ախուրյան գետի մոտ մի պտղաբեր ու  
րնդածակ դաշտ, վոր նրա անունով հետո կոչվեց  
Շիրակ»: Շարայի վարկամոլությունը հայ ժողովրդի մեջ առակ  
եր գարձել, և մինչև հիմա ել Շիրակի հայ զյուղացիները շատակեր  
մարդու մասին այգաբես են տառմ: Այս առասպեկից յերեսում ե,  
վոր Շիրակի գավառը անցալում յեղել և նույնքան պտղաբեր,  
վորքան այսորվա Շիրակը:

Նիդ գավառի լեռնարնակ ժողովարդները՝ հայերը, քրդերը,



17

աղքրեցանցիները, վորոնց զլխավոր զբաղմունքն եւ յեղել խաչ նարածությունը, առատության բարիքներն ստացել են իրենց սիրելի Արագածից, ինչպես հարազատ մորից:

Ամառը Արագածի թափշալատ, բարալից լանջերը ծածկվում են հարյուրավոր սպիտակ զրաններով և քարաշեն տնակներով: Հաղարավոր աշխատավոր զյուղացիներ բարձրանում են յայլաները, վորտեղ ամբողջ ամառվա ընթացքում առատ կեր կա իրենց անասունների համար: Աղնան նկղբին իրենց սայլերը, ձիերը բարձում՝ իջնում են յայլաներից, բեռնավորված յուղի, պանրի հսկայական պաշարներով:

Այժմ, յերբ խորհրդային կաղթանակել են զյուշ դում, Արագածի վրայից անհետացել են նախկին բեզերի և աղաւների որաններն ու յայլաները: Այժմ այնտեղ արածում են կոլտնածառային հոտերը, և նախկին ճնշված ու լքված չորանի մելամազնու ու հուսակտուր մեղեղիների փոխարեն Սրբակածի գագաթների տակ ճնշում են նոր մարդու ազատ ու լիաթոք յերգերը, նոր ուրախ ու յերջանիկ սոցիալիստական կյանքի սրտաբուխ յերգը: Եկվ հայ շինականի՝

«Դարդս լացեք, սարի սմբուլ  
Ալվանալվան ծաղիկներ»-ի  
Կամ»

«Սև մութ ամպեր ճակտիս դիդվան,  
Դուման հագար, Ալագյաղ»-ի փոխարեն,

Այժմ կարկաչուն աղբյուրների, սարի սմբուների, շուշանների բյուրավետ միջավայրում ճնշում ե կոլտնածառական հովվի սրտաբուխ յերգը, իր իսկ կողմից հորինված:

...Ալագյաղին գիպավ շողը,  
Տրակտորը քցին խողը,  
...Կուլակի խոր կողը:  
Այ տրակտոր, խան տրակտոր,  
Շուտ արի մեյլան, տրակտոր:  
(«Հայկ. խորհրդ. Փոլկոր», եջ 90):

Ալագյաղ բարձր տեղ ա,  
Զուրը հիմանդի գեղ ա,  
Զորան սիրածին առավ  
Ի՞նչ լավ ման զալու տեղ ա:

Թյուրական գյուղի կոլտնածառական Մելիք Մարտիրոսյանը գովարանում ե Արագածը, վորը սոցիալիզմի յերկրում ամբողջապես ծառայում ե ժողովրդին, դարձել ե մատչելի Յեթե հին կուլտուրան բարձրանում եր մինչև 1200 մետր բարձրության, վորտեղ կառուցվում երին ամրոցներ, ինչպես ամենաբարձր Ամբերդ ամրոցը, ապա նորը՝ սոցիալիստականը բարձրացել ե մինչև 3250 մետր բարձրության, վորտեղ կառուցված ե Խորհրդագոյին Միության մեջ բարձր ողեր և ուժանական կան կայաններից մեկը, Սև լճի ափին, վորտեղ տարվա բուրը ամբուներին խորհրդային մարդիկ դիտումներ են կատարում: Խորենց ծառայությունը մատուցելով խորհրդային առաջավոր գիտությանը: Արագածի հարավային լանջերին ընկած Բյուրական, Որգով, Դըղըր, Խոաքլու և մյուս մի շարք զյուղերի ընակիչներից շատ շատերը, վորոնք իրենց յայլաներից ավելի բարձր չեն յին գնում, այսոր մեծ սիրով են ուղեկցում խորհրդային յերկուրի բոլոր մասերից յեկող տուրիստներին գեպի Արագածի գագաթները, անգամ ձմեռվա դաժան սառնամանիքների ժամանակ: Ահա թե ինչու մեծ սիրով նրանք յերգում են Մելիք Մարտիրոսյանի հորինած յերգը:

Ալագյաղ բարձր սար ե,  
Զորս հաջանե բոլոր քար ե,  
Շորագոլի վրեն դար ե,  
Ջուրդ լավն ե, ջան Ալագյաղ:

Ամպեր կուգան քուլառքուլա,  
Զորս զագաթը բռնված մասախսուղ ա,  
Քամիդ չորս կողմից կուգա,  
Ջուրդ համեղ ե, ջան Ալագյաղ:

Գագաթը բարձր չե, յերկար,  
Արարատին միշտ նման ե,  
Քարը վոսկեղին գոհար ե,  
Ջուրդ սառն ե, ջան Ալագյաղ:

Ռուսաստանից մինչև Հայաստան  
Ռմբող Յեվրոպան զարմանա,  
Քագաթիդ վրա մարգրկ բնակվեցան,  
Ողիդ համար, ջան Ալագյաղ:

Գակաթք բնիժանված եւ չըրսի;  
Այժմ գու մեզ հետ խոսի;  
Դետնիդ տակ ունես վոսկի,  
Շատ ուրախ ենք, ջան Ալագյաղ:

Բյուրականն արին ըստանցի,  
Քո վրեն տնակ շինեցին,  
Հայ, վրացի բնակլեցին.  
Ոդիդ համար, ջան Ալագյաղ:

Մելիք Մարտիրոսյանից գովասանած:  
Մայիս-հունիս այստեղ ման գաս,  
Նոր բանաստեղծ կդառնաս,  
Մեկ հավա յես, ջան Ալագյաղ: \*)

\*\*\*

Յերկար գարեր շարունակ հայ ժողովրդի մեջ պատմվել եւ հետագյում սերնդից-սերունդ եւ անցել Լուսավորչի կանթեղի առասպեկլը, վորն իբր թե կախված եւ յերկնքից, Արագածի վրա, առանց պարանի: Ինչպես հայունի յե մեզ հայ ժողովրդի պատմությունից, մեր թվագրության IV դարի սկզբում մեծ հեղաշրջում կատարվեց մեր ժողովրդի կյանքում, յերբ հռչակավոր, քաղաքակրթված Տրդատ մեծի որոք, նրա արքունական քարտուղար Գրիգոր Լուսավորչի ջանքերով, քրիստոնեյությունը մուտք գործեց Հայաստան: Մի քանի տասնյակ տարիներ շարունակ քանդում եյին հին հեթանոսական կուսաները՝ մեհյանները, և նրանց փոխարեն արմատավորվում եր քրիստոնեյական յեկեղեցին, իր նոր, լուսավորչական քարոզներով: Այդ, իրոք, վորոշ առումով կուլտուրական և քաղաքական մեծ հեղաշրջում եր հայ ժողովրդի կյանքում, առաջադիմական մեծ քայլ եր, վորը կատարվում եր Գրիգոր Լուսավորչի և նրա հետևորդաշակերտների յետանդուն ջանքերով: Ահա այդ Գրիգոր Լուսավորչի կանթեղի հայտնի առասպեկն եւ, վոր այսպես սերտ կերպով կապել եւ ժողովուրդն Արագած սարի հետ: Այդ կանթեղը վառվոմ եւ այն ժամանակ, յերբ մութը ծածկում եւ հայոց աշխարհը, վառվում եւ վորպեսզի լուսավորի հայոց «մօթ յերկիրը» (Հ. Թուման-

յան): Մըզյեք հայոց ոյլ «անտակ վիշտը» (Հ. Թումանյան) պարսկական, արաբական, թուրք սելջուկների կամ այլ ոտարչերկրից բռնակալների կրնկի տակ հեծող յերկրի ժողովրդի հեծէկլտանքը չե՞, անհույս հավատը դեպի յերկինք, դեպի անորոշը, վորտեղից պետք եւ լույս ծագի, վորտեղից պետք եւ գա իր համար ազատություն բերող մեծ ուժը:

Գույցի և այսպես: Ահա յերեկոյան մթնշաղին, յերբ վերջաշլույսի վերջին ցոլքերը սկսում են մարել և թագնվել հեռավոր հորիզոնի հետևում, յերբ խավարի մասյլ քողը ծածկում է Արածնանցան և Եփրակի գաշտերը, իսկ լեռների գոգում՝ ավաստանած Ապարանի լեռնային գյուղերում յերեկոյան ճրագն եւ վառվում իր աղոտ լույսով, Արագածի վրա, նրա չորս գագաթների մեջ մեղում մի յերկար ցոլք եւ կախված լինում, վորը կարծես կանթեղ լինի՝ յերկնքից անանց պարանի կախված, վորը պատրաստ վում եւ գիշերվա մթին գիմավորելու իր հըավառ լույսով և լուսավորելու հայոց աշխարհը:

Մեր տաղանդավոր բանաստեղծները՝ թե չով, Հովհաննեսյանը և թե Հովիկ. Թումանյանը չեն մոռացել սրտառուչ առշղեր նվիրելու նաև այս հրաշագեղ տեսարանին Արագածի վրա: «Լուսավորչի կանթեղը» վերնագրով իր վոտանավորի մեջ այդ յերեւյնից այսպես եւ պատկերացնում չով. Թումանյանը,

Կես գիշերին կանթեղը վառ,  
Կախի և ընկած յերկնքից,  
Լուսավորչի կանթեղն անմար,  
Հայոց մթնած յերկնքից:

Կախ և ընկած առանց պարան,  
Արագածի կատարից,  
Ու աեղանից հսկայական,  
Լույս և տալիս աշխարհին:

Լույս և տալիս յերկար դարեր,  
Ու վասկառում են միշտ անշեջ,  
Սրբի մաքուր արցունքները  
Ցուղի տեղակ նրա մեջ...

Վոչ մարգկային ձեռ կհասնի  
Են ահավոր բարձրունքին,  
Ցեղ վոչ քամին կհանգսնի,  
Վիշապ քամին ահավոր  
(Թումանյան, յերկիր, հջ 60):

\*) Տպագրում եւ առաջին անգամ: Գրի յեմ առել յես Բյուրականում  
1939 թ. ամառա եթովեկիցիայի ժամանակ: Գ. Դ.

Թոկ խորհրդային յերիտասարդ շնորհալի բանաստեղծ Հովակիմ Ակուսավորչի կանթեղը» (պարողիա) վերնազրով իր բառամստեղծության մեջ, անդրադառնալով Արագածի վրա կախված կանթեղի առասպելին, բոլորովին այլ մոտեցում ունի: \*) Կարելի յեւ ասել վոր Շիրազի մոտ այդ ավանդությունը, վոր գալիս և մեր պապերից, սոցիալիստական լուսարձակի շողերի տակ իջև նում և Արագածի դադաթից և լուսավորում և դարձերից ի վեր Բնավար ու մութ գյուղական խրճիթները և նոր կուտուրան մըսցընում և ժողովրդի կենցաղի մեջ: «Դյուղական իդիոտիկմը», անկուլտուրականությունը, ինչպես Կարլ Մարքսն և ասում, անցյալ համարակություններին հստուկ գյուղական աշխատավորության այդ անտանելի գոյավիճակը, անհետ կորավ շնորհիվ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության: Այժմ մեր գյուղում նոր՝ սոցիալիստական ուրախ ու յերջանիկ կյանքն և ափրում, վորը նոր կանթեղի՝ Շիր-կանայի, խորհրդային Շիրակի ելեկտրիֆիկացիայի կրակներով և լուսավորվում:

Յեվ ահա այժմ Շիրակի աշխատավոր ժողովուրդը, ինչպիս նրա պապերը, ամեն յերեկո, վերջալույսի մարելուց հետո, այլ ևս չի նայում Արագածի կատարին և չի սպասում, վոր յերեկոյան աղջամուղին կանթեղը վառվի այնտեղից, բարձրից, այլ սպասում և Շիր-կանալի հիջրոկայանին, թե յերբ բաշխման տախտակի մոտ կանգնած բանվորը կվոլորի ելեկտրական անիվը, և մի ակնթարթում կվառվեն հազարավոր ելեկտրական կանթեղներ՝ իլիչի բոցավա կրակներով կվողողեն դաշտ ու գյուղ, գործարաններ ու հանքավայրեր և լույսի տոն կլինի հինա-

\*) Հաւատվարչի կանթեղի առասպելի ծագման մասին, գիտական հետաքրքիր աեղեկություններ և ատլիս Միք. Նալբանդյանը իր «Կրթական աշխատավայր» մեջ, Հայ Խօսոր գեմակրատ գործիչը, Պետրոսպալովսկ ամբողջ ըքարե պարկերից մեջ պարփակված յերազում եր, թե յերբ հգա այն ժամանակը, յերբ հայ գիտականները կուսումնասիրին Արագածի վարպետությունը, իսկ ինքը զրում և Հաւատվարիչի կանթեղի կրանական, վոչ գիտական ժագման մասին: Նա նիստ քննադատության յենթարկելով կրօնական միօպիցիզմ շաբարչով ժածկած այշ առասպելի ծագումը, գիտական շատ հետաքրքիր աեղեկություններ և տալիս, Արագածի գագաթին մի շարք բնական յերեղությների շնորհիվ յերեմն կրակ յերեալու դեպքերի մասին, վորը ժողովուրդն ընգունել և Հաւատվարչի կանթեղին տեղ, իսկ յեկեղեցին շատել և որբագրութեալ այգ, կրօնական բնույթ սարգ այգ բնական յերեսւթին, վորը Միք. Նալբանդյանն անվանել և «Հելմուսի կրակներ»: Այդ մասին մանրամասն զգրի մեր Արագածի աշխարհագրականը աշխատաւթյան մեջ, վորն այժմ պատրաստվում և ապագրության համար:

ՀԵՂԻՆԱԿ

վուրց Շիրակի բուլոր բնագավառներում: Իսկ Արագածն այսոք գրկում և միայն աստղերը և ժամանակակից զմրավիս արքին բնիմում ցած: Ահա թե ինչպես և յերգում «Հաւատվարչի կանթեղը» բունատեղի հովակը:

Յերբ վոր ջահել Արագածի ծեր գլխից իրիկունն և ծածկում Շիրակն ու հեռուն, ել վոչ մի աչք ցնորաբույր յերկյուղից Զի սպասում այն կանթեղի վառվելուն:

Ու չի վառվում յերկնանման կատարին Վոչ մի կանթեղ, վոր վառվել եր գարերով Աստվածավախ մեր պապերի ուղեղին՝ Իրեւ ավանդ լցված վոսկե հույսերով:

Սակայն գիտեմ՝ նախահայրերն իմ բոլոր իրենց հեռու խրճիթներից այն մթին, Ամեն զիշեր յերազել են զլախիկը՝ Մի լույս կանթեղ տեսնել լեռան ճակատին,

Վոր բարձրունքից լույսը շող տար և շողեր կանթեղի պես ցոյար կյանքի խավարում: Ու աստղեր են հանգել անթիվ ու դարեր, Բայց կանթեղը լեռան գլխին չի վառվում: Ու միշտ՝ յերբ ծեր Արագածի գահն արծաթ Վերջալույսն և վոսկեզոծում ու մարգում, Բարձրունքներից յես նայում եմ մեր անթարթ կանթեղներին, վոր Շիրակից\*) են վառվում:

Այդ պապերիս յերազներն են կյանք առել Վոսկերուրել կրակներով իլիչի, Ու զիշերն և լույսից հեռու ծվարել Դարեր անցնեն՝ վոչ մի կանթեղ չի հանգչի:

Ու նիրում և Արագածը յերկնքում Լուսավորչի հին կանթեղը մուացած... Լոկ աստղերն են գրկում զլուխն ու յերգում Յեվ կարուից զմրուխտ սրտին ընկնում ցած:

(Հ. Շիրազ, Յերկեր, եջ 216—217):

\*) Շիր-կանապից:

Խորհրդային Հայաստանի յերիտասարդ պոետները մեծ պաշտուվ և վողերությամբ են յերգում Արագածի լանջերին ծաղկագիշանիկ կյանքի մասին, վեհ ու հպարտ Արագածի մասին և ամենամեծ նվերը Խորհրդային Յերկրի սրտին—Կրեմլին, Սոցիալիզմի Մեծ Գործի ղեկավարներին—Արագածից են տառում: Այսպիսի տողեր կարելի յե գտնել մեր յերիտասարդ բոլոր զրոյների մոտ:

Նշանակալից են յերիտասարդ բանաստեղծ Արամենի հետեւյալ տողերը՝ նվերված Արագածին.

—Ո՞վ Արագած, Հպարտ ու վեհ,  
Գնում եմ յես Կրեմլը վառ,  
Ի՞նչ ես տալիս՝ տանեմ նվեր  
Մեր ցնծության, մեր հոր համար:

—Իմ լանջերին անվերջ հնչող  
Յերջանկության յերգ ու տաղից  
Փնջիր յերգեր արեաշող,  
Անա ընծառ յերախտալից:

(Արամեն, «Նվեր», հջ 2):

Հայ յերաժշտագետներից Արագածը սիրել և Արագածի մասին յեղած ժողովրդական յերգերը մշակել են հայ շինականի յերգի տաղանդավոր յերգիչը՝ Կոմիտասը: Նա յերգեր են որինել Արագածի լեռնաբնակ քրդերի կյանքից, քրդական դյութիչ սըրբնոցի վրա, վորոն այսոր ել այնքան հմայիչ կերպով հնչում են Արագածի լանջերին:

Անշուշտ, այդ վեհ իդեան եր, վոր նրան մզում եր դեպի Արագածի լանջերը, քրդական, աղբբեջանական և հայկական որաներում լինելու և մոտիկից ծանոթանալու նրանց կյանքին և կենցաղին, լսելու նրանց յերգն ու տաղը լեռների զրկում, տեսնելու Արագածի վեհանիստ վիրքը Արարատյան դաշտի կենտրոնում, զիտելու նրա գագաթից մեր հոյակապ լեռնաշխարհը:

Յերբ յերաժշտագետ Կոմիտասը 1910 թվին յերկրորդ անգամ բարձրանում է Արագածի գագաթը, ի շարս մյուս յերգերի, ինչպես՝ «Սարերի վրով գնաց» և այլն, զրում են նաև «Ալաշյաղին» վերնագրով քաղցրահնչուն յերգը:

Հայ ժողովրդի լավագույն պոետները, պատմիչները, յերաժշտագետները և բաղմաթիվ այլ բնագավառների ականավոր

գործիչներ, ինչպես նաև յեկըռովայի ականավոր գիտնականներ բազմաթիվ վերելքներ են կատարել դեպի Արագածի կատարները և մեծ գոհունակությամբ ու վողեվորությամբ բանաստեղծական սրտառուչ տողեր են նվիրել և բաղմաթիվ նկարագրություններ են գրել հրաշալի Արագածի մասին:

Հեռու չե այն ժամանակը, յերբ Արագածի բոլոր լանջերը կծածկվեն տուրիստական ճամբարներով և հանգստյան տներով, վորտեղ սոցիալիստական յերկրի յերջանիկ մարդը կվայելի Արագածի բոլոր հրաշալիքները:

Ա. Ե. Յ. Յ.

Եղանակ  
Տեսակ  
Տեսակ  
Տեսակ

Տեսակ  
Տեսակ  
Տեսակ  
Տեսակ

Տեսակ  
Տեսակ  
Տեսակ  
Տեսակ

## ՆՄՈՒԵՆԵՐ

ՖՈԼԿՈՐԻՑ ՅԵՎ. ԱՅԼ.  
ԲԱՆԱՍԵՂԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՐԱԳԱԾԻ ՄԱՍԻՆ

ԱԼԱԳՅԱԳ

Մառախլաղատ քո գագաթու,  
Կրծքից համեղ ե քո կաթու  
Ծըծում եր Աշոտ Յերկաթ,  
Ցույց տնկու, քո արձան, ջան Ալադյան:

Համբերդն ու Արխացան,  
Սև բերդն է մեծ նշան,  
Տիրում եր Սմբատ իշխան,  
Ուկը է իշխանող, ջան Ալադյաղ\*):

ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ ԱԼԱԳՑԱԶԻ ՄԱՍԻՆ \*)

...Ալաղյաղին դիպավ շողը,  
Տրակտորը քցին խողը  
...Կուլակի խոր կողը:  
Այ տրակտոր, խան տրակտոր,  
Շուտ արի մեյգան, տրակտոր:  
(«Հայկական խորհրդային ֆոկուր», էջ 90)

Ալագյազը տուն ունիմ,  
Մեջը վսակե սյուն ունիմ,  
Քաշվե, քյոփողլու դյադա,  
Քեզպես հազար շուն ունիմ:

(Բողոքանովկայի շրջանի Փ. Խանչալի գյուղի գեղջկուհի Վարվառա  
Բղոյան)

Ալագյազ բանցը սարին  
Զյուն ե կիտվել կատարին,  
Արի, թառլան, թե տներ ինձ,  
Թըռնահմ խասնեմ իմ յարին:

(Կոտայքի մշղանի Յելլովան գեղջկուհի Միլուհի Հակոբյան)

Ելել եմ Ալագյազը,  
Կողքիս կախել եմ սաղը,

\*) Գրի և առնված 1939 թվի Արտագածի գավառագիտական եքսպերի-

Չեմ առնի մալամազը,  
Կերթամ կընկնեմ Արազը:  
(Կարբեցի Մկրտիչ Սիմոնյան)

Ծաղկավանքա դշերը,  
Խորովածի շշերը,  
Ծոցդ մտնեմ քշերը;  
Պաշեմ խալ-խալ թշերը:  
(Մուղնեցի Տ. Պողոսյան)

ԶԱՆԳՑՈՒԻՌԻՄՆԵՐ\*)

Ծաղկավանքա դշերը,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Խորովածի շշերը,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:  
Մեռնեմ բող-բող ուանզիդ,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Բուր են կարմիր թշշերդ,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Ծաղկավանքա ձորեր են,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Մեր բաղի խնճորեն են,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Քամի տվեց վեր զըցեց,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Շեկ յարիս մոլորել եմ,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Ծաղկավանք ձյուն ե գալիս,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Ծաղիկ մեր տուն ե գալիս,  
Զան, ծաղիկ, ջան, ջան

\*) Այս և մյուս մողովրդական յերգերը Արակածի մասին գրի եմ առել  
յև 1939 թ. ամառը Արագածի եքսպեդիցիայի ժամանակ:  
«Զանզուումները» գրի ե առել ընկ. Խուզավերդյանը (Ուանավանք  
գյուղից): Վ. Դ.

Գյուղից փախան կուտկներ,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Բարի խարար ե գալիս,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Ալագյաղ բարձր տեղ ա,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Ջուրը հիվանդի դեղ ա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Զորան սիրածին առավ,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Ինչ լավ ման գալու տեղ ա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Ալագյաղ սառն աղբյուր,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Արծաթե թաս, վոսկե ջուր,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Մեկ յես խմեմ, մեկը դու,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Ալբուկ լինենք յես ու դու,  
Զան, ծաղիկ, ջան ջան:

Ալագյաղ բարձր տեղ ա,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Չորս բոլորը լավ գեղ ա,  
Զան, ծաղիկ ջան, ջան:

Իմ սիրածը վոր ինձ տան,  
Զան գյուլում, ջան, ջան,  
Յես եկ կասեմ լավ տեղ ա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Ալագյաղի ծառերը,  
Զան, գյուլում, ջան, ջան,  
Սուրու սուրու գառները,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Դառները յարս ե պահել,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Իմ սերը սրտումս ե պահել,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Խնձոր ունեմ՝ կծած ա,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Չորս կողմը արծաթած ա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Արերս ուզեց՝ չտվի,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Ասի՝ յարի դրկած ա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Ծաղկավանք ծաղիկ չկա,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Իմ յարին մայրիկ չկա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Աղջի՛, քո յարին բռնի՛,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Ուրիշին իման չկա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Աղջի՛, անունդ Շուշան,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Արի տամ քեզի նշան,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Քու գեյրեն ե խշաշան,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Մատանիս տամ քեզ նշան,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Կարմիր կովը զըրմզի,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Մախեմ տամ քեզ բուռնուզի,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Բուռնուզը հախ եմ արել,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Պատիցը կախ եմ արել  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Կանգնել ես նավի վրա,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Չինարի ծառի վրա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Թուխլիկ կեպի յես դրել,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Շեկլիկ քյանքյուղիտ վրա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Աղջի՛, անունդ ի՞նչ ա, ասա,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Հագիդ մինթանեն խաս ա,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

Ես երկոր ա՝ չեմ տեսել,  
Զան, գյուղում, ջան, ջան,  
Մի քիչ իմ խետը խոսան,  
Զան, ծաղիկ, ջան, ջան:

## ԶՐՈՒՅՑ ԱՐԱԳԱԾԻ ՀԵՏ

Ու թե տոած, սարեկ դառած, սար եմ կանչել յես մանկուց,  
Շատ եմ վազել ու յերազել սարի անտառն հինավորց. \*)

Սիրով անմեռ նայում եմ գեռ Արագածին սպիտակ,  
Ծով Շիրակի գանձերով լի լեռնաշխարհը վոտքիս տակ,  
—Ու՞ր են քար, պճնազարդող զով անտառներն այն շքեղ,  
Շանթն ե զարկել, կյանքից զրկել թե, մարդկային մի հին ցեղ:

Յեզ՝ լսում եմ սուտակազեմ Արագածի ձայնը լսուլ.  
«—Տերն հողվորից դաշտը խլեց, նըան թողեց սարն ամուլ.

\* ) Հազարամյակներ առաջ անտառներ են սոսափել Շիրակի լեռների  
վրա:

## ԱԱ. ԽԵՐԳ

իմ Արագած, Շիրակի մայր,  
Մորս նման անարատ, ունեց մաքուսական  
Կյանք ես բղխում, կաթով ցողում զայդ նույն մաք  
իմ հայրենի հողն առատ:

Ծաղիկներդ ստինքներդ են, որ լուս ու մղացու ան  
Ու թող ծծեմ յես կրկին,  
Վոր մանկանամ վոաքերիկ ասակ, ուն և շոշարի ան  
Թիթեռ գառնա իմ հողին:

Վոր յերբ անցնի, չձանաչեմ  
իմ սիրտծին աշագեղ,  
Մոռանամ սերն ու չտիրեմ, ո պիտ մուտք առաջ  
Ուրախ ճախրիմ ամեն տեղ...

(Հ. Շիրաց)

ՀՀ Ազգային գրադարան



NL0338445

27643

зрч

ԳԻՆԸ 2 Ր.

В. ДАРЬЯН

АРАГАЦ В АРМЯНСКОЙ ПОЭЗИИ

Проснадат

Ереван,

тип. Проснадата. Терян № 127

1940